


ԳՈՌ Ն. ԵՐԱՆՅԱՆ

ԷԶԵՐ ՆԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ

ՄԱՍ Ա

Քրդախոս հայեր
Հայաստան քրդերեն տպագիր գրքեր



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մատենադարան
Մերոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

GOR YERANYAN

**EPISODES FROM ARMENIAN-KURDISH HISTORY:
VOL. 1**

**Kurdish-Speaking Armenians, Printed Books in Kurdish Language
With Armenian Script**

Yerevan 2024

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ГОР ЕРАНЯН

**СТРАНИЦЫ ИЗ АРМЯНО-КУРДСКОЙ ИСТОРИИ:
ЧАСТЬ 1**

**Курдоязычные армяне, армянописьменные
курдские печатные книги**

Ереван 2024

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՈՒ Ը. ԵՐԱՆՅԱՆ

**ԷՋԵՐ ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ.**

ՄԱՍ Ա

Քրդախոս հայեր, հայատառ քրդերն ու տալազիր գրքեր

Երևան 2024

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63
Ե 764

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

Խմբագրական խորհուրդ՝
Խմբագիր՝ պ.գ.դ. Արշակ Փոլադյան

ԵՐԱՆՅԱՆ ԳՈՌ Հ.
Ե 764 ԷՋԵՐ ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ. քրդախոս հայեր,
հայատառ քրդերեն տպագիր գրքեր / Գ. Հ. Երանյան.- Եր.:
«Մատենադարան» հրատ., 2024.
Մաս Ա.- 400 էջ:

Գրքում ներկայացված է Բիթլիսի ու Դիարբեքիի (Տիգրանակերտ) նահանգների քրդախոս հայերի պատմության՝ մինչև Հայոց ցեղասպանությունն ընկած ժամանակահատվածը: Քրդախոս հայերի պատմությունը քննվում է ինչպես Օսմանյան կայսրության, այնպես էլ արևմտահայ իրականության համատեքստում: Առաջին անգամ զավառ առ զավառ ներկայացվում է քրդախոս հայերի բնակության արեալը: Գրքում արտացոլված են նաև քրդախոս հայերի ինքնությանն առնչվող հարցերը, նրանց մասին հայախոսների ու օտարների ընկալումները, լեզվի ու ազգության համադրության հարցն ու հայ ինքնության համակարգում քրդախոս հայերի տեղը: Առանձին տեղ է հատկացված քրդախոս հայերին հայերեն սովորեցնելու նախաձեռնություններին, դրանց շարժառիթների, գրանցած արդյունքների ու հարակից հարցերի պատմության ուսումնասիրությանը: Մենագրության եզրափակիչ մասում ներկայացված է քրդախոս հայերի համար տպագրված հայատառ քրդերեն գրքերի մատենագիտական ցանկը:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63
ISBN 978-9939-897-27-1

DOI:10.57155/UYKW7019
© Մաշտոցյան Մատենադարան, 2024
© Գոր Հ. Երանյան, 2024

Գիրքը նվիրվում է անվանի հայագետ, միջնադարագետ
Հայրապետ Մարգարյանի (1950-2021 թթ.) հիշատակին

Նվիրվում է նաև քրդախոս հայերով բնակեցված
Արարատի մարզի Դարակերտ գյուղին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	9
ԳԼՈՒԽ I. ՔՐԳԱԽՈՍ ՀԱՅՈՑ ԳԱՎԱՌՆԵՐԸ	16
Քրդերենը որպես Lingua Franca	16
Հարավային Հայաստան, Քրդստան, Քրդահայաստան	22
Բիթլիսի (Բաղեշ) վիլայեթ, Սղերդի գավառ	25
Խարզան գավառակ (Խրրզան, Ղարզան).....	27
Ռընդվան (Ռնտուան, Ռընտվան)	48
Էրուհ (Բոհտան) գավառակ	54
Շիրվան գավառակ (Շիրուան, Շերվան).....	64
Փերվարի գավառակ (Բարվար)	77
Սղերդ քաղաք	81
Խիզանի գյուղեր	94
Իսյան	97
Դիարբեքիի (Տիգրանակերտ) վիլայեթ, Դիարբեքիի գավառ	104
Սիվան գավառակ (Նփրկերտ, Ֆարդին)	104
Բշերիկ գավառակ (Պշերիկ)	119
Բահրամք (Բարավան)	130
Ջգիրե գավառակ (Ջեգիրե, Ճեգիրե, Ճեգիրա).....	133
Ջուղի Դաղի (Արարաղ) քոչար հայերը	137
Դիարբեքիի հարակից որոշ գյուղեր.....	140
Դերիկ գավառակ	142
Մամուրեթ-Էլ Ազիզի (Խարբերդ) վիլայեթ	145
Չազայախոս հայեր	148
Սորանիախոս հայեր	153
Քրդախոս (կուրմանջիախոս) հայերի թվի վերաբերյալ.....	156
ԳԼՈՒԽ II. ՔՐԳԱԽՈՍ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ	159
Քրդախոս հայերին տրվող անվանումները	159
«Ֆլա»-ն որպես քրդախոս հայոց ինքնանվանում	169
Քրդախոս հայոց ազգանունները.....	173

Քրդախոս հայոց ինքնության առանձնահատկությունները.....	178
Հայ եկեղեցին որպես քրդախոս հայոց ինքնության առանցք	191

ԳԼՈՒԽ III. ՔՐԳԱԽՈՍ ՀԱՅԵՐԻՆ ՀԱՅԵՐԵՆ ՍՈՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՆԱԽԱԶՁԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

203

Մկրտիչ Տիգրանյանի գործունեությունը	205
Հայոց միացյալ ընկերության գործունեությունը քրդախոս հայոց գավառներում	209
Հայոց միացյալ ընկերության դպրոցական ցանցը քրդախոս գավառներում	209
Հայոց միացյալ ընկերության գործունեության դադարեցումն ու դպրոցների փոխանցումը պատրիարքարանին.....	217
Քրդախոս հայոց գավառներում միացյալի գործունեության նոր փուլը	223

ՔՐԳԱՏԱՆԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՍԻԱՆ.....

233

Քրդստանի հայ ավետարանական միսիայի սկզբնավորումը	238
Քրդստանի առաջին ավետարանական մշակները.....	246
Դիմակայել սովին ու համիդյան կոտորածներին	252
Քրդստանի գործը. վերականգնում ու վերանայում	256

ԳԼՈՒԽ IV. ՀԱՅԱՏԱՌ ՔՐԳԵՐԵՆ ՏՊԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....

266

Ակնարկ քրդերեն տպագիր գրքի պատմությունից	266
Հայատառ քրդերեն տպագիր գրքեր	271
Հայատառ քրդերեն չտպագրված գրքեր.....	324
Վերջաբան.....	328
Summary	334
Հավելված	342
Գրականության ցանկ	351
Անձնանունների ցանկ.....	371
Տեղանունների ցանկ.....	380

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս մենագրությունը նվիրված է Հայաստանում ֆրդախոսության տարածման, ֆրդախոս հայերի պատմության, ֆրդախոս հայոց գավառների ի հայտ գալու, ֆրդախոս հայերի ինֆնության, հայատառ ֆրդերեն գրականության և մի շարք այլ հարցերի ուսումնասիրությանը: Մինչ ֆրդախոս հայերի պատմությանն անդրադառնալը հարկ եմ համարում ընդհանրական գծերով ներկայացնել հայ-ֆրդական պատմամշակութային դաշտի ստեղծումը, հայ-ֆրդական հարաբերությունների սկզբնավորումը¹:

Հայ-ֆրդական առաջին դիպվածային շփումները, ամենայն հավանականությամբ, սկզբնավորվել են դեռ արաբական շրջանում, սակայն դրանք աստիճանաբար նկատելի և ինտենսիվ են դառնում 10-11-րդ դարերում, երբ Հայկական լեռնաշխարհի սահմաններին ու հարավային եզերական աշխարհներում հայտնվում են առաջին ֆրդերը: Այդուհանդերձ, սկզբնաղբյուրները միշտ չէ, որ արձանագրում են ֆրդական ցեղերի տեղաշարժը. ֆրդերը Հայաստան են ներթափանցում ոչ միայն որպես ռազմիկներ, այլև որպես խաշնարածներ: Մշտական թափառումներն ու նոր արոտավայրեր գտնելու կենսական պահանջը խաշնարած ցեղերին ստիպում է շարժվել դեպի Հայաստան, ուր Արծրունյաց տերերի իշխանության անկումով բացվել էին երկրի հարավային դարպասները:

Սելջուկների՝ Իրանի խորքերից դեպի Ատրպատական շարժը, ամենայն հավանականությամբ, ստիպել է տեղի բազմաբանակ փուրջ բնակչությանը շարժվել դեպի Միջագետք և Հայաստան: Քրդական ցեղերի միգրացիան տեղի էր ունենում հիմնականում երկու ուղղությամբ՝ Ատրպատականից Կորեայի և Վասպուրական (Վանա լճի շրջակայք) և Միջագետքից դեպի Ադանի: Արդեն

¹ Հայ-քրդական նախնական շփումների մասին տե՛ս **Լեո**, Երկերի ժողովածու, հտ. 2, Երևան, 1967, էջ 635-641, **Asatrian G.**, Prolegomena to the Study of the Kurds, “Iran and the Caucasus”, vol. 13, 2009, pp. 1-57, **Մարգարյան Հ.**, Չաքարյանների ծագման ավանդությունը միջնադարյան հայ պատմագրության մեջ, «ԴԲՀ», 1992, № 2-3, էջ 139-152, ինչպես նաև՝ **Поладян А.**, Курды в VII-X веках (по арабским источникам), Ереван, 1987, **Փոլադյան Ա.**, Քրդերը Արբասյան խալիֆայության ժամանակաշրջանում (X-XI դդ.), Երևան, 1999:

13-րդ դարում հարավային նահանգների մի շարք վայրերում ֆրդերը դարձել էին բերդերի տիրակալներ: Մոնղոլական դարաշրջանի ավարտից անմիջապես հետո հարավհայկական նահանգներում իշխանություն են հաստատում ֆրդական ցեղերը՝ Վանա լճի ավազանում՝ *շամոյանները*, Բաղեշում՝ *ռոժկիները*²: Պատահական չէ, որ 15-րդ դարից սկսյալ հայերեն ձեռագրերի հիշատակարանային վկայությունները ցույց են տալիս, որ այս շրջաններում ապրող հայ մարդու մտապատկերում աշխարհիկ իշխանությունը մարմնավորում է ֆուրդ պարոնը՝ էմիրը³:

Այսպիսով, 14-րդ դարի կեսից սկսվում է ֆրդական ցեղերի տիրապետությունը Հայկական լեռնաշխարհի հարավային շրջաններում, որը 16-րդ դարում ամրապնդվում է օսմանյան վարչական համակարգով: Օսմանյան ապակենտրոն կառավարման համակարգում *յուրթլուք*, *օջաքլլք* ու հատկապես *հյուքումեթուլթյուն* կոչվող վարչատարածային միավորները ֆրդական առանձին իշխանությունների ժառանգական սեփականությունն էին ու կարծես նրանց անօտա-

² 14-15-րդ դարերում շամոյան կամ շամբո քրդական տոհմի տիրույթները տարածվում էին Ջուլամերկի, Հաքյարիի, Գավառի, Ադրակի, Վանի ու Ոստանի վրա: Ռոժկիների տիրույթների կազմում էին Բաղեշը, Խլաթն ու հարակից տարածքները: Քրդական այս կիսանկախ իշխանությունների մասին տե՛ս Լևոն Խաչիկյանի անդրադարձը, **ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ**, Մասն երկրորդ (1451–1480 թթ.), կազմեց Խաչիկյան Լ., Երևան, 1958, էջ LIV-LVIII: Շամոյանների մասին տե՛ս նաև **Խաչատրյան Ա.**, Հաքքարի քրդական իշխանության կազմավորման հարցի շուրջ (ԺԴ դար), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, № 13, Քրդագիտություն, Երևան, 1985, էջ 134:

³ Լեոն գրում է. «Եվ թվում է, թե քուրդ կալվածատերերը հայ գյուղացիության վերաբերմամբ շարունակում էին լինել այն, ինչ էին հայ նախարարները, իհարկե, հասկանալով այս բանը լոկ կալվածատիրական սիստեմի մտքով: Այս է երևի պատճառը, որ քրդական տիրապետությունը հայերի մեջ, դատելով մի շարք հանգամանքներով, համարվում էր մի տեսակ մերձավոր, այսպես ասած՝ ընտանի...», տե՛ս **Լեո**, հտ. 2, էջ 641: Գուցե Լեոյին այս մտքին բերել է այն հանգամանքը, որ քուրդ էմիրներին հայ հիշատակագիրները երբեմն համարում էին իրենց սեփական իշխանները՝ նրանց վերաբերմամբ գործածելով «մեր» անձնական դերանունը: Օրինակ, 15-րդ դարի հայ հիշատակագիրներից մեկը շամոյան տոհմի էմիրներին կոչում է մեր բնիկ պարոններ («բնիկ պարոնաց մերոց», տե՛ս **ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ**, Մասն առաջին (1401-1450 թթ.), կազմեց Խաչիկյան Լ., Երևան, 1955, էջ 581: Ավելի ուշ՝ 1626 թ., Խիզանի քուրդ էմիրի մասին կարդում ենք. «ի թագաւորութեան աշխարհակալ արքային տուլթան Սուլիման խոնդքարին և ի մերոյ քուրդ պարոնին Սոլթան Ահմատ բէկի», տե՛ս **Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ** (1621-1640 թթ.), հտ. Բ, կազմեցին՝ Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Երևան, 1978, էջ 234:


րելի տարածքները լինեին⁴: Այդ առանձնաշնորհյալ տարածքների ու կենտրոնի կապը բավականին թույլ էր, դրանք երբեմն ընկալվում էին ֆրդական *էմիրու-թյուններ*⁵:

Միով բանիվ, մինչև 19-րդ դարի կեսը՝ մինչև օսմանյան արդիականացման ու կենտրոնացման ֆաղափականությունը, որը հանգեցրեց ֆրդական կիսանկախ իշխանությունների վերացմանը, պատմական Հայաստանի Կորնայֆ (Կորովաց աշխարհ), Աղձնիֆ, Տուրուբերան, Մոկֆ, Վասպուրական նահանգների ու Հյուսիսային Միջագետքի մի զգալի մասում փաստացի իշխանությունը ֆրդական ցեղերի ձեռքում էր, ինչն էլ անջնջելի կնիք է թողնում այդ շրջանների ու նրա բնակիչների պատմական ճակատագրի վրա: Վերոհիշյալ շրջանների բացարձակ մեծամասնությունը կազմում էին հայերն ու ֆրդերը, թյուրֆական տարրի գոյությունն աննշան էր՝ երբեմն արտահայտված միայն օսմանյան պաշտոնետության առկայությամբ:

Հայ-ֆրդական փոխառնչությունների արդյունքում ձևավորվում է հայատառ ֆրդերեն ձեռագիր, ավելի ուշ նաև՝ տպագիր գրականությունը: 15-րդ դարով է թվագրվում հայատառ ֆրդերեն առաջին ձեռագիր նյութը, որը կարող ենք համարել հայկական միջավայրում ֆրդերենի իմացության ու կիրառության վաղագույն վկայությունը: Թեև դրա գոյությունը փաստում է հայկական միջավայրում ֆրդերենի իմացությունը, սակայն 15-րդ դարում դեռ չկային հայ և ֆուրդ խառը բնակչություն ունեցող այնպիսի գավառներ, որտեղ հայերենն իսպառ մոռացված լիներ: Աստիճանաբար պատմական Հայաստանի Աղձնիֆ, Կորնայֆ, Մոկֆ աշխարհների որոշ գավառներում, որոնք հայկական հոգևոր կենտրոններից կտրված ու ֆրդական ծովում գտնվող առանձին կղզյակներ էին, հայերենն իսպառ մոռացվում է, հայերը դառնում են ֆրդախոս: Քրդերեն ասելով մենք հասկանում ենք կուրմանջին, ֆրդախոս բառն էլ կիրառվում է կուրմանջիախոս նշանակությամբ, այսինքն՝ ֆրդախոս հայ ասելով մենք նկատի ունենք հայու-

⁴ Օսմանյան վարչական համակարգում յուրթուրք, օջաքլըք և հյուքումեթություն կոչվող շրջաններն իրենց ունեցած տարատեսակ արտոնություններով տարբերվում էին սովորական, դասական օսմանյան գավառներից, այդ մասին տե՛ս **Gabor Agoston**, “A Flexible Empire: Authority and its Limits on the Ottoman Frontiers”, *International Journal of Turkish Studies*, 9, 1-2 (Summer 2003), 15-31:

⁵ Քուրդ էմիրների ու կենտրոնական իշխանության հարաբերությունների մասին տե՛ս **İbrahim Özcoşar**, *Sultan Ve Mir: Osmanlı Kürt İlişkilerine Giriş, Osmanlı Devleti Ve Kürtler*, edit. İbrahim Özcoşar-Shahab Vali, İstanbul, 2017, էջ 9-35:



Հայերեն-քրդերեն բառարանագրության փորձ, ՄՄ, ձեռ. 771, 18-րդ դար

թյան այն հասվածք, որ մոռացել էր հայերենն ու խոստով էր միայն ֆրդերեն: Ընդ որում, հայերի կուրմանջխախտս դառնալու գործում չպիտի մոռանալ նաև եգդիներին. էթնոգավանական այս հանրույթը ժամանակ առ ժամանակ մեծ թիվ է կազմել ֆրդախոս հայերի հարևանությամբ:

Բնականաբար, հայերենի մոռանալն ու ֆրդերենի յուրացումը պատմական տևական ժամանակ է պահանջել, հնարավոր է՝ մի գավառը մյուսից ավելի վաղ

է ֆրդախոս դարձել: 19-րդ դարի սկզբում արդեն այս գավառների ֆրդախոսությունն ընկալվում է որպես դարերով արմատացած երևույթ⁶: Դուկաս Իննիքյանը 1806 թ. հրատարակած գրքում Աղձնեաց նահանգի Դատիկ-Տատիկ գավառի գյուղերի մասին գրում է, որ «մոռացեալ զլեզուն հայկական, խօսին ֆրդերէն»⁷: Տատիկը ֆրդախոս հայոց գավառների հյուսիսային վերին գիծն է, ուստի ամենայն վստահությամբ կարելի է ասել, որ ավելի հարավ ընկած շրջաններն առնվազն այդ ժամանակ արդեն ամբողջությամբ ֆրդախոս էին: 17-րդ դարը հավանաբար երկլեզվության շրջան է եղել, իսկ արդեն 18-րդ դարից այս գավառների հայերն աստիճանաբար մոռացել են հայերենն ու դարձել ֆրդախոս: Փաստն այն է, որ 19-րդ դարի սկզբում հայկական այս գավառներն ամբողջովին ֆրդախոս էին: Սղերդ ֆաղափի հայերի օրինակը լավագույնս ցույց է տալիս, որ կարելի է մի ֆանի դար խոսել արաբերեն, սակայն չձուլվել արաբական գրերի կրոնին: Բանն այն է, որ միջնադարյան մտապատկերում լեզուն երկրորդվում էր կրոնին ու անէանում, իսկ ահա տառը մնում էր էական:

Քրդախոս հայոց գավառները որքան էլ ներփակ համայնքների տպավորություն թողնեին, այդուհանդերձ անմասն չէին Օսմանյան կայսրության ընդհանուր զարգացումներից, ուստի և ֆրդախոս հայերի պատմությունը ֆննվում է ինչպես Օսմանյան կայսրության ու նրա արևելյան գավառների, այնպես էլ արևմտահայ (օսմանահայ) իրականության համատեֆստում:

Այս մենագրության առանցֆային հարցերից մեկը 19-րդ դարում և 20-րդ դարասկզբում գոյություն ունեցած ֆրդախոս հայոց գավառների հստակեցումն է: Քանի որ ֆրդախոս հայոց գավառների վերաբերյալ մատուցվելիք նյութը վերաբերում է ուշ օսմանյան ժամանակաշրջանին՝ 19-րդ դարից մինչև Հայոց ցեղասպանություն ընկած ժամանակահատվածին, ֆրդախոս գավառների ներկայացման համար հիմք ենք ընդունել հենց այդ ժամանակի օսմանյան վարչական բաժանումները: Բազմազան աղբյուրների հաղորդած տեղեկությունների հիման վրա վեր ենք հանել ֆրդախոս գավառակների, գյուղախամբերի ու ֆաղափների ժողովրդագրական պատկերը՝ ցույց տալով, թե որքան հայ բնակչություն են ունեցել դրանք:

⁶ Քրտախոս Հայերուն Համար, «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1911, № 641, էջ 3:

⁷ Իննիքյան Ա., Աշխարհագրութիւն Չորից Մասանց Աշխարհի՝ Ասիոյ, Եւրոպիոյ, Աֆրիկոյ և Ամերիկոյ, Մասն Առաջին. Ասիա, հտ. Ա., Վենետիկ, 1806, էջ 180:

Որոշ գավառների ֆրդախոս կամ թե հայախոս լինելու վերաբերյալ գոյություն ունեն հակասական տվյալներ: Նպատակահարմար ենք համարել անդրադառնալ նաև այդ «վիճելի» շրջաններին՝ փորձելով հնարավորինս վեր հանել ու հասկանալ գոյություն ունեցած լեզվական խնամակար: Ավելորդ չենք համարում նշել, որ ֆրդախոս հայերի մասին որպես այդպիսին ոչ մի գիտական հետազոտություն չի արվել, եթե հաշվի չառնենք նրանց բնակության արեալի մասին Հրաչյա Աճառյանի տողերը: Միաժամանակ, Սղերդի առանձին գավառակների բնակչության կազմի, հայաբնակ գյուղերի և հարակից այլ հարցերին անդրադարձել են Ռոբերտ Թաթոյանը, Ռայմոնդ Գևորգյանը, Գեղամ Բաղդասյանը, Տիգրան Մարտիրոսյանը (տե՛ս համապատասխան բաժիններում):

Հարկ է ընդգծել, որ թեև Հայոց ցեղասպանության տարիներին ֆրդախոս հայերի մի մասը կոտորվել ու արտաքսվել է, սակայն ֆրդախոս հայությունը արևմտահայության այն հատվածն է, որ շարունակել է ֆիչ թե շատ հավաքաբար ապրել իր նախնի բնակության վայրերում մինչև 1930-ականները և որոշ դեպքում նույնիսկ մինչև 1940-ականների սկիզբը (խոսքը Խարզան-Բշերիկի մասին է): Հիմնականում 1930-ականներին մաս առ մաս դուրս գալով Թուրքիայի Հանրապետությունից՝ ֆրդախոս հայերը բնակություն են հաստատել Սիրիայում: Երկրորդ աշխարհամարտից հետո մի քանի փուլով (1940-1960-ական թթ.) ֆրդախոս հայերի մի մասը հաստատվել է Խորհրդային Հայաստանում: Խարզանի, Բշերիկի, Սղերդի շրջակայքում մնացած ֆրդախոս հայերի ժառանգներն ապրում են ֆրդական կամ իսլամական ինֆնությամբ, ումանք պահպանել են հայկական ծագման մասին հիշողությունը⁸: Այս աշխատության մեջ ֆննության նյութ չենք դարձրել Հայոց ցեղասպանության ժամանակ ֆրդախոս հայերի կոտորածների ու հետցեղասպանական շրջանի պատմությունը⁹:

Մենագրության մեջ հատուկ ուշադրություն է դարձվել ֆրդախոս հայերի ինֆնությանը, նրանց ինֆնանվանումներին ու օտարների կողմից տրված անվանումներին, հայախոսների ու օտարների շրջանում նրանց վերաբերյալ տա-

⁸ Տեղում մնացած և քրդացած կամ թե իսլամացած քրդախոս հայերի ինֆնության պատմությունն առանձին ուսումնասիրության կարիք է զգում:

⁹ Բրդախոս հայերի կոտորածների մասին տե՛ս նաև **Raymond Kevorkian**, *The Armenian Genocide, A complete History*, London, New York, 2011, էջ 339-40, 367-368, Սղերդի գավառի կոտորածների մասին տե՛ս նաև **Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում**, Վերապրածների վկայություններ, Փաստաթղթերի ժողովածու, հտ. II, Բիթլիսի նահանգ, Երևան, 2012, էջ 107-121:

րածված ընկալումներին: Միաժամանակ, անդրադարձել ենք արևմտահայ իրականությունում առկա գաղափարական խմորումներին ու ընթացող ինֆնության փնտրտոմին՝ փորձելով դրանցում տեղորոշել ֆրդախոս հային: Լինելով ֆրդախոս հայերով բնակեցված Արարատի մարզի Դարակերտ գյուղից՝ հնարավորություն ենք ունեցել ի մոտո ծանոթանալու ֆրդախոս հայերի սովորություններին, նրանց պատմություններին ու հուշերին, ինչն օգնել է կողմնորոշվելու ինֆնությանն առնչվող բարդ հարցերում:

Մենագրության երրորդ գլուխը պատմում է ֆրդախոս հայերին հայերեն սովորեցնելու նախաձեռնությունների մտահղացման, դրանց շարժառիթների, կրոնական ու ազգային բաղադրիչի մասին: Առանձնացրել ենք ֆրդախոս հայությանը հայերեն սովորեցնելու առավել մեծ և մասշտաբային 2 նախաձեռնություններ: Դրանցից առաջինը, որ կոչվում է «Քրդստանի միսիա», 1860-ականներին նախաձեռնել են Տիգրանակերտի ու Խարբերդի շրջանների հայ բողոքականները, որոնք ծանոթ են եղել ֆրդախոս հայերին: Երկրորդ նախաձեռնությունը կապվում է Կ. Պոլսում գործող կրթական կազմակերպության՝ Հայոց միացյալ ընկերության անվան հետ, որն ի թիվս գավառային այլ դպրոցների, նախակրթարաններ ու վարժարաններ է հիմնել նաև Տիգրանակերտի ու Սղերդի ֆրդախոս հայերի համար:

Մենագրության եզրափակիչ մասում առաջին անգամ ներկայացվում է նաև հայատառ ֆրդերեն տպագիր գրականության մատենագիտական ամբողջական ցանկը՝ դրանց տպագրության հանգամանքների վերհանմամբ և լեզվաոճական որոշ առանձնահատկությունների լուսաբանմամբ հանդերձ:

Այսպիսով, մենագրությունը ֆրդախոս հայոց պատմության վերականգնության փորձ է, որի առանցքում լեզվական միկրոլանդաֆտի ուրվագծումն է, ֆրդախոս հայերի ինֆնության առանձնահատկությունների ֆնությունը, հայ ինֆնության շրջանակում ֆրդախոս հայերի տեղորոշումը և ֆրդախոս հայերի համար տպագրված հայատառ ֆրդերեն գրքերի վերլուծությունը:

**EPISODES FROM ARMENIAN-KURDISH HISTORY: VOL. 1,
KURDISH-SPEAKING ARMENIANS, PRINTED BOOKS IN
KURDISH LANGUAGE WITH ARMENIAN SCRIPT**

SUMMARY

This monograph is the first volume of a two-part book. The second volume, which will be published soon, will focus on the Kurdish manuscripts written with Armenian letters of Matenadaran, dated 15th-19th centuries. This volume examines the Kurdish-speaking Armenians in the late Ottoman period, including their place of residence, identity, as well as the Kurdish printed books with Armenian letters. The study's chronological scope extends up to the Armenian Genocide, which resulted in the massacre of a significant number of Kurdish-speaking Armenians. However, the research does not cover this event.

During the late Ottoman period, the population of Bitlis, Van, Diyarbekir, and partially Erzurum vilayets was mainly composed of Armenians and Kurds. In 1907, the newspaper "Armenia" noted this fact: "The population of Turkish Armenia is composed entirely of Armenians and Kurds. While there are some Turks in a few central cities, they are a minority and mostly hold government positions". In this respect, it is identical to the observation of a foreign traveler at the end of the 19th century that "Armenia from Erzurum to Persia, like the historical Mesopotamian Plain, is really divided between the Armenians and the Kurds... the Christians have settled down in the steppes, and the Kurds are in the mountains".

According to Lynch (H. F. B. Lynch, 1862-1913), there is little evidence of Turkish inhabitants in the city of Van or its surrounding provinces. Considering this circumstance, Buzand Kechyan, the editor-in-chief of the newspaper "Byuzandion", published in Constantinople (Istanbul), uses the expression "Armenian-Kurdish provinces". It is worth noting that Turkish was not commonly used as the language of oral communication in this Armenian-Kurdish common

environment. Instead, the lingua franca was mainly Kurdish, which was familiar to the Armenians. According to an Armenian newspaper in 1910 "... all Armenians living mixed with Kurds know the language of Kurds indiscriminately".

During the late Ottoman period, there were kazas in the Bitlis and Diyarbekir vilayets where Armenians spoke only Kurdish, specifically the Kurmanji dialect. This group of Armenians was referred to as Kurdish-speaking, as they had forgotten their native language and exclusively spoke Kurdish.

The exact period when Armenians began speaking Kurdish is difficult to determine. According to Ghukas Inchichyan (1806), the Armenian inhabitants of the Tatik region (Hizan, Bitlis) had forgotten their native language and were speaking Kurdish. Evidence from the mid-19th century suggests that there were no longer any Armenian speakers in the Kurdish-speaking provinces. This indicates that the Kurdish language was spread in these provinces by at least the 18th century, if not earlier. There are records of Arabic-speaking Armenians in the same area from the 17th century, demonstrating that it was possible to maintain one's identity while speaking a foreign language for a long period of time. Unfortunately, there is little text or information on the influence of Armenian on the Kurdish language of Kurdish-speaking Armenians. However, based on available information, both Kurdish-speaking and Arabic-speaking Armenians have retained some Armenian words and, in some instances, even grammatical forms.

When the area of residence of the Kurdish-speaking Armenians is mapped, it forms a line, the characteristic of which is southernness, these were the southernmost regions of the Armenian Highlands (some part of Aghdznik, Korchaik, and Mokka states of Greater Armenia), with the following clear trajectory: Bohtan-Shirvan-Kharzan-Bsharik-Silvan. These provinces were some of the first to experience Kurdish migration. The emergence of Kurdish-speaking Armenians was a result of their isolation, being surrounded by a Kurmanji-speaking environment and cut off from Armenian spiritual and cultural centers. The limited social mobility and small range of communication of the Armenian residents in the Kurdish-speaking provinces contributed to the strengthening of the Kurdish language. Those living under the influence of Kurdish tribes found it challenging to relocate to areas where they could interact with Armenian speakers.

One of the main objectives of this book is to identify the regions where Kurdish-speaking Armenians resided in the 19th and early 20th centuries. The kazas of

Summary

the sanjak of Siirt of Bitlis vilayet inhabited by Kurdish-speaking Armenians were Kharzan (nowadays Kurtalan), Eruh (Bohtan), partially Shirvan (Şirvan), Pervari and Sghert (Siirt) city. Kurdish-speaking Armenians also lived in the villages of kaza of Khizan in the Bitlis vilayet. The kazas of Diyarbekir vilayet inhabited by Kurdish-speaking Armenians were Silvan (Farkin, Nprkert), Bsharik (Beşiri) and Cizre. However, in the primary sources, some "controversial" regions were mentioned at the same time as Armenian-speaking and Kurdish-speaking. I have endeavored to comprehend the existing linguistic mosaic as thoroughly as possible.

Simultaneously, I analyzed the demographic situation region by region to understand the number of Armenian settlements and Armenians residing in the aforementioned regions of Bitlis and Diyarbekir. The population of Kurdish-speaking Armenians decreased due to the Hamidian massacres, persecutions, and forced conversion to Islam. My calculations indicate that on the eve of the Armenian Genocide in 1915, there were approximately 35,000 Kurdish-speaking Armenians. They lived in more than 200 villages and cities of Sghert and Farkin.

Until the mid-19th century, these peripheral regions of the Armenian world were unknown to Armenians, a sort of terra incognita. In the mid-19th century, the Armenians of Constantinople were unable to comprehend and imagine how an Armenian Christian could be dressed in Kurdish clothing and speak only Kurdish. The Kurdish language has taken root among Armenians, establishing a distinct linguistic landscape with clear geographical boundaries and a unique identity. The monograph focuses on the identity of Kurdish-speaking Armenians, including self-names and names given by foreigners, as well as common perceptions about them among Armenian speakers and foreigners. It also addresses the ideological ferment in Western Armenian reality and the identity search. The goal is to identify Kurdish-speaking Armenians within these social changes.

During the late Ottoman period, Armenian-speaking individuals considered Kurdish-speaking Armenians as Armenians and Christians. Armenians have never questioned their identity as both Armenians and Christians. Despite this, some Armenians and non-Armenians have referred to Kurdish-speaking Armenians as Kurdized Armenians, Christian Kurds, Kurdish-Armenians, or simply Kurds. There was a general perception that Kurdish-speaking Armenians were distinct from the rest of the Armenian population. It was often believed that Kurdish-speaking Armenians had a different way of life, manners, costumes, and religious ideas,

leading to the mentality that they were “completely different Armenians”. The term “different Armenians” used to describe that Kurdish-speaking Armenians should not only be attributed to their foreign language, but also to their disconnection from the socio-political movements that were taking place in Ottoman Armenians environment. In the 19th century, the Armenian identity transformed, moving from a religious identity to an ethnolinguistic one, although religion continued to play a significant role. This shift has led Ottoman Armenians to perceive Kurdish speakers as somewhat distinct from other Armenians. Language was considered the most crucial element of nationality in the new paradigm of Ottoman (Western) Armenian identity. It served as the axis, the connecting link, and the most important condition for the unity of the nation. Amidst these ideological debates, there is a growing sentiment that Kurdish-speaking Armenians are not genuine Armenians or Christians.

However, being cut off from national currents and the unifying field of nationalism, they continued to express the old, Christian Armenian identity. During the period when ethnic identity began to take precedence over religious identity among Armenians in the Ottoman Empire, Kurdish-speaking Armenians remained devoted followers of the Armenian Church. Furthermore, in the Kurdish-speaking provinces, church ceremonies were conducted in Classical Armenian (Grabar), which was not understood by either the people or the priests. Additionally, according to the testimony of a Kurdish-speaking Armenian, the liturgy in Kurdish-speaking Armenian monasteries resembled a Kurdish song. In such circumstances, the ritual held particular significance for Kurdish-speaking Armenians, setting them apart from the surrounding communities.

Although Kurdish-speaking Armenians were often confused with Kurds, sometimes called Kurds or Armenian-Kurds, Kurdish-speaking Armenians were steadfast in their commitment to Armenianness and Christianity and to preserving their own identity. The devotion to the Armenian Apostolic Church played a crucial role in this matter. Therefore, although the concept of a nation is sometimes associated with a particular language, the use of different languages did not create distinct ethnic identities in the case of Kurdish-speaking Armenians. In the Ottoman Empire, the memory of being an Armenian-Christian was so strong that it provided a strong sense of identity for the Kurdish-speaking Armenians, which was the reason why a separate ethno-linguistic group did not emerge. Nevertheless, they appeared to be a separate sub-ethnic group of Armenians.

Summary

The term 'Fla' (Fillah) expresses a duality of Kurdish-speaking Armenian identity (Kurmanji Kurds used this term to refer to Armenians and Christians in general). In 1860, Mkrtich Tigranyan published a primer for Kurdish-speaking Armenians, in which he reprimanded them for using the term 'Fla' to address each other. He urged them to use the terms 'Armenian' and 'Christian' instead. For Kurdish-speaking Armenians, the term 'Fla' seems to represent both their Armenian and Christian identities, which were tightly intertwined. Apart from speaking Kurdish and not being part of the new Armenian identity system, they were also distinguished from other Ottoman Armenians by their lifestyle and clothing, which was similar to that of the Kurds.

Both the followers of the Armenian Apostolic Church and the Armenian Protestants made significant efforts to teach Armenian to Kurdish-speaking Armenians and bring them back to “Armenianism” and “Christianity”.

Since the 1880s, the United Societies of Armenians (Sociétés-Unies Arméniennes, Miatzial), the largest educational organization of Western Armenian life, has been providing significant attention and special care to Kurdish-speaking Armenians. This has resulted in the formation of one of the densest networks of newly opened schools in Sghert and the surrounding provinces. There was a strong desire among Kurdish-speaking Armenians to learn Armenian. Numerous villages in Bsharik, Kharzan, and Silvan approached the United Societies of Armenians with a request to establish schools. Thanks to the organization, a generation of Armenian-speaking young people emerged in Kurdish-speaking Armenian provinces. However, the Ottoman authorities' persecution prevented the Miatzial's schools from carrying out stable activities. The Ottoman authorities may have been concerned about the organization's initiative to teach the Armenian language and provide national education to foreign-speaking Armenians.

This monograph refers to "Kurdistan Mission" or "Kurdistan Work", an initiative of Armenian Protestants to educate Kurdish speaking Armenians, which had both religious and national motives. The preaching and education of Kurdish speaking Armenians was one of the most discussed issues at the meeting of the Kharberd (Harpoot) Evangelical Union held in Tigranakert in October 1866. The decision of the meeting was the appointment of special preachers for this purpose. It was the Armenian Evangelicals who were responsible for this new missionary direction, and the American Board missionaries were not obliged to get involved.

Summary

Pastor Martiros Shmavonyan (1833-1892) is considered the organizer and inspirer of the Kurdistan cause. A master of the Kurdish language, he was responsible for the training of Kurdophone young people in Christian doctrine, as well as the teaching of the Armenian language and the sending of missionaries to Kurdish speaking provinces. The “Kurdistan work” had two main goals: evangelization and education. The American Board's missionaries were primarily interested in the religious factor, but in the Armenian evangelical environment the emphasis on learning the Armenian language was as important as evangelization. For Martiros Shmavonyan, the teaching of the Armenian language to Kurdish speaking Armenians and their integration into the rest of the nation was a noble mission. For Armenian evangelicals, “Kurdistan mission” serves as a protective shield against accusations from followers of the Armenian Apostolic Church. In response to their accusations, they testify about the “Kurdistan work”, the purpose of which is to bring Kurdish speaking Armenians to Christianity and Armenianness. Years later, missionary Barton interpreted the goal of the initiative of Protestant Armenian churches among Kurdish speaking Armenians as follows: “to reclaim this lost branch of the Armenian race and restore them to their nation and lead them back to Christ”.

The mission not only teaches a part of Kurdish speaking Armenians the Armenian language, but also contributes to the creation and development of Kurdish printed literature in Armenian script.

It is a noteworthy fact that the Armenian alphabet was used when writing in Kurdish not only in Armenian circles but also in the multilingual book published by the Collegio Urbano de propaganda fide in Rome in 1793. The main reasons for the appearance of Kurdish manuscripts and printed books with Armenian letters are the common Armenian Kurdish area and the interweaving of Armenian written culture and Kurdish oral tradition. It is important to note that the Kurdish translation of the Gospel was not completed by Protestant preachers for decades, and only became possible in the Armenian environment. The target group for Kurdish books should be the Kurdophone Armenians. Various directions in the creation of Kurdish literature can be identified.

1. Foreign missionaries attempted to spread the Gospel and evangelize both Kurds and Kurdish-speaking Christians through Kurdish books in Armenian

Summary

script. However, they gradually shifted their focus to preaching to Kurdish-speaking Christians, particularly Armenians.

2. In addition to evangelism, Armenian Protestants wanted to teach the Kurdish-speaking Armenians their native language.

3. Individual figures of Armenian Church attempted to teach the basics of Christianity, the Armenian language, and Armenian history to Kurdish-speaking Armenians through bilingual books in Armenian and Kurdish in Armenian script. If knowledge of the Armenian alphabet was enough for Protestants to enable Kurdish-speaking Armenians to read the Kurdish Gospel with Armenian letters, learning the Armenian language was even more important for followers of the Armenian Apostolic Church. In contrast to evangelicals, whose books often focus on religious factors, the books published by Mkrtich Tigranyan place emphasis on Armenian history and identity.

Eighteen books printed in Kurdish using the Armenian script are included in the bibliographic list. These books mainly consist of primers, spiritual hymns, and gospels, and were created primarily for Kurdish-speaking Armenians. A big part of the church and liturgical vocabulary used in these books is predominantly Armenian. The use of words formed by combining the Armenian suffix 'oğ (ôł)' with Kurdish verbs is noteworthy in both Mkrtich Tigranyan's books (1860, 1866) and the translations of the Gospel by the Shmavonyan brothers (1856-1857, 1872). However, borrowings from Armenian and Turkish are gradually being replaced in Kurdish books written in Armenian letters, resulting in a more 'pure' form of Kurdish.

The Gospel of Matthew was published in 1856 is the first book in Kurdish in Armenian script. It was also the first book printed in Kurmanji Kurdish and the first Kurdish translation of the Gospel. The book also covers history in Kurdish. In 1860, Tigranyan's primer became the first educational book in Kurdish. It contains illustrations and is the first Kurdish-Armenian printed dictionary. The Kurdish Ballads, written by Haykuni in 1903-1904, are one of the largest collections of Kurdish folklore from that time. "Kurdish Melodies" by Komitas is the first publication of Kurdish musical folklore, containing the first collection of Kurdish musical notation.

Owing to the translations and printing of new books, Kurdish literature in Armenian script has developed independently and continuously. It is important

Summary

to note that both Armenian Protestants and followers of the Armenian Apostolic Church attempted to create a common middle language from the various Kurmanji dialects. This was done to make it more understandable for all Kurmanji speakers. Therefore, it is necessary to study the stylistic features of Kurdish literature written in Armenian script during the current stage of the development of the Kurmanji literary language. Thus, the monograph has a goal to reconstruct the history of Kurdish-speaking Armenians, focusing on the linguistic micro-landscape, the identity characteristics of Kurdish-speaking Armenians, their localization within the framework of Armenian identity, and the analysis of Kurdish books written with Armenian letters.

ԳՈՌ Հ. ԵՐԱՆՅԱՆ
ԷՋԵՐ ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ
ՄԱՍ Ա
Քրդախոս հայեր, հայատառ քրդերեն տպագիր գրքեր

GOR YERANYAN
EPISODES FROM ARMENIAN-KURDISH HISTORY:
VOL. 1
Kurdish-Speaking Armenians, Printed Books in Kurdish Language
With Armenian Script

ГОР ЕРАНЯН
СТРАНИЦЫ ИЗ АРМЯНО-КУРДСКОЙ ИСТОРИИ:
ЧАСТЬ 1
Курдоязычные армяне, армянописьменные
курдские печатные книги

Էջադրումը, ձևավորումը և շապիկը՝ Անահիտ Խանգաղյանի
Շապիկին՝ դրվագներ Բիթլիսից
Սրբագրիչ՝ Գայանե Մկրտչյան
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

ISBN 978-9939-897-27-1



Չափսը՝ 70 x 100 1/16: Տպ. մամուլը՝ 25
Տպաքանակ՝ 200

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
հրատարակչություն
ք. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033
publishing.matenadaran@gmail.com
www.matenadaran.am